ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-22/3-2

ք.Երևան «17» 01 2022թ.

Վարչապետի աշխատակազմն ի դեմս Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գ. Բոշյանի, որը գործում է Աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԼԱՍՄԵԴ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Աֆանդյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կարիքների համար լաբորատորիական ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող **N 1 և NN 1.1-1.6** հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի **N 1 և NN 1.1-1.6** հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի **N 1 և NN 1.1-1.6** հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի **N 1 և NN 1.1-1.6** հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի **N 1 և NN 1.1-1.6** հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

տվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **15 աշխատանքային** օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 7 550 000 (յոթ միլիոն հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Սույն պայմանագրի համաձայն «Պատվիրատուի» կողմից «Կատարողին» վճարման ենթակա գումարը հաշվարկվում է փաստացի մատուցված ծառայությունների դիմաց՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող NN 1.1-1.6 հավելվածների գնացուցակի (նշված գները ներառում են ԱԱՀ):

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի **N 1 և NN 1.1-1.6** հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը

...ող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ...ամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի **N 1 և NN 1.1-1.6, N 2, N 3 և N 3.1** հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.14 Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Պատվիրատուի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնին՝ բացառությամբ ֆինանսական գործառույթների՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 18-րդ հոդվածների պահանջները:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ	«ԼԱՍՄԵԴ» ՍՊԸ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,	իր. հասցե՝ՀՀ, ք. Երևան,Ա.Իոսիֆյան փ.տ.31/1
Կառավարական տուն 1	գործ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան Ա. Աբելյան 6/4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Արաբկիր մ/ճ
ՀՀ	Հ/Հ 163058032083
ՀՎՀՀ 02505554	ՀՎՀՀ 00173775
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 17 » 01 2022 թ. կնքված
ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-22/3-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով ախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության տեխնիկական բնութագիրը****	չափման միավորը	ընդհանուր առավելագույն գինը*** / ՀՀ դրամ /	ընդհանուր քանակը	մատուցման հասցեն	մատուցման ժամկետը**
1	71911100/516	Լաբորատորիական ծառայություններ ջրի որակի փորձաքննության համար: Տեխնիկական բնութագիրը ներկայացված է համաձայն կից N 1.1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնացուցակի	դրամ	3 100 000	1	ՀՀ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքված համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2022թ.-ի դեկտեմբերի 25-ը
2	71911100/517	Լաբորատորիական ծառայություններ ջրի որակի փորձաքննության համար: Տեխնիկական բնութագիրը ներկայացված է համաձայն կից N 1.2 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնացուցակի	դրամ	3 100 000	1	ՀՀ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքված համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2022թ.-ի դեկտեմբերի 25-ը
3	71911100/518	Լաբորատորիական ծառայություններ օդի և արտաքին միջավայրի փորձաքննության համար: Տեխնիկական բնութագիրը ներկայացված է համաձայն կից N 1.3 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնացուցակի	դրամ	1 050 000	1	ՀՀ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքված համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2022թ.-ի դեկտեմբերի 25-ը
4	71911100/519	Լաբորատորիական (լաբորատոր-գործիքային) ծառայություններ լուսավորության, օդի միկրոկլիմայի ցուցանիշների որոշման համար: Տեխնիկական բնութագիրը ներկայացված է համաձայն կից N 1.4 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնացուցակի	դրամ	200 000	1	ՀՀ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքված համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2022թ.-ի դեկտեմբերի 25-ը
5	71911100/520	Լաբորատորիական ծառայություններ ռեկրեացիոն ջրերի փորձաքննության համար: Տեխնիկական բնութագիրը ներկայացված է համաձայն կից N 1.5 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնացուցակի	դրամ	40 850	1	ՀՀ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքված համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2022թ.-ի դեկտեմբերի 25-ը
6	71911100/521	Լաբորատորիական ծառայություններ հողերի փորձաքննության համար: Տեխնիկական բնութագիրը ներկայացված է համաձայն կից N 1.6 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնացուցակի	դրամ	59 150	1	ՀՀ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքված համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2022թ.-ի դեկտեմբերի 25-ը**:

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:
**Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, և այունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:
***Վճարումը կիրականացվի փստացի մատուցված ծառայությունների դիմաց:
****Լաբորատոր փորձաքննության ավարտից հետո անհրաժեշտ է տրամադրել եզրակացություն:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02505554

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԼԱՍՄԵԴ» ՍՊԸ
իր. հասցե՝ՀՀ, ք. Երևան,Ա.Իոսիֆյան փ.տ.31/1
գործ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան Ա. Աբելյան 6/4
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Արաբկիր մ/ճ
Հ/Հ 163058032083
ՀՎՀՀ 00173775

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
« 17 » 01 2022 թ. կնքված
ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-22/3-2 ծածկագրով պայմանագրի

Տեխնիկական բնութագիր-գնացուցակ*

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԱԿԱԲՈՒԾԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ		
Ծառայության անվանումը	**Ցուցանիշ (հետազոտություն)**	**միավոր գին մեկ փորձաքննության համար /ՀՀ դրամ/**
Ջերմատոլերանտ կոլիֆորմ մանրէներ 1/	100 մլ-ում մանրէների քանակ	1000
Ընդհանուր կոլիֆորմ մանրէներ 2/	100 մլ-ում մանրէների քանակ	1500
Մանրէների ընդհանուր քանակություն 2/	Գաղութներ առաջացնող մանրէների քանակը 1 մլ-ում	1500
Ջրի նմուշում աղիքային ախտածին մանրէների և ջրային ծագման բռնկումների այլ հարուցիչների հայտնաբերում	100 մլ-ում մանրէների քանակ	2000
Ջրի նմուշում կոլիֆագերի առկայության և քանակության որոշում	100 մլ-ում մանրէների քանակ	2000
Հելմինթների ձվիկների հայտնաբերում ջրի նմուշում /սանիտարամակաբուծաբանական հետազոտություն	-	1000
Ջրի նմուշառում	-	2000
Լաբորատոր – գործիքային հետազոտությունների արդյունքների հիման վրա եզրակացության տրամադրում	-	3000
1կմ	դրամ	150
Ընդամենը		**14150**

*Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02505554

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԼԱՍՄԵԴ» ՍՊԸ
իր. հասցե՝ՀՀ, ք. Երևան,Ա.Իոսիֆյան փ.տ.31/1
գործ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան Ա. Աբելյան 6/4
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Արաբկիր մ/6
Հ/Հ 163058032083
ՀՎՀՀ 00173775

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.2
« 17 » 01 2022թ. կնքված
ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-22/3-2 ծածկագրով պայմանագրի

Տեխնիկական բնութագիր-գնացուցակ*

ԸՆԴՀԱՆՐԱՑՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՎ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՋՐԵՐՈՒՄ ՀԱՃԱԽ ՀԱՆԴԻՊՈՂ ՎՆԱՍԱԿԱՐ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏՐՈՊՈԳԵՆ ԾԱԳՈՒՄՈՎ ՆՅՈՒԹԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՆԵՐ, ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԶԳԱՅՈՐՈՇԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ		
Ծառայության անվանումը	**Ցուցանիշ (հետազոտություն)**	**միավոր գին մեկ փորձաքննության համար /ՀՀ դրամ/**
Ջրածնային ցուցանիշ	pH միավորներ	1500
Ընդհանուր հանքայնացում (չոր մնացորդ)	մգ/լ	3000
Ընդհանուր կոշտություն	մմոլ/լ	1000
Հոտ	բալեր	500
Համ	բալեր	200
Գունավորում	աստիճաններ	500
Պղտորություն	Ըստ Ֆորմազինի	500
Մնացորդային ազատ քլոր	մգ/լ	1000
Նիտրատներ (ըստ NO^{3-})	մգ/լ	2500
Նիտրիտներ (ըստ NO^{2-})	մգ/լ	2500
Ամոնիում (ըստ NH^{4+})	մգ/լ	1500
Քլորիդներ(Cl^-)	մգ/լ	2000
Ջրում ջրածնային ցուցիչի (PH) սանիտարաքիմիական հետազոտություն՝ պոտենցիմետրիկ մեթոդ, ֆիքսանալի կիրառմամբ	-	1500
Ջրում հանքայնացման /չոր մնացորդի սանիտարաքիմիական հետազոտություն՝ գրավիմետրիկ մեթոդ, չորացնող պահարանի կիրառմամբ	-	3000
Ջրի հետազոտություններ՝ քլորոֆորմի որոշում (քլորացման դեպքում)	-	2000
Ջրում երկաթի սանիտարաքիմիական հետազոտություն	-	1500
Ջրում պղինձի սանիտարաքիմիական հետազոտություն	-	1500
Ջրում սուլֆատների սանիտարաքիմիական հետազոտություն	-	2000
Ջրի նմուշառում	-	2000
Լաբորատոր – գործիքային հետազոտությունների արդյունքների հիման վրա եզրակացության տրամադրում		3000
1կմ	դրամ	150
Ընդամենը		**33350**

*Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02505554

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԼԱՍՄԵԴ» ՍՊԸ
իր. հասցե՝ՀՀ, ք. Երևան,Ա.Իոսիֆյան փ.տ.31/1
գործ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան Ա. Աբելյան 6/4
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Արաբկիր մ/հ
Հ/Հ 163058032083
ՀՎՀՀ 00173775

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.3
« 17 » 01 2022թ. կնքված

Տեխնիկական բնութագիր-գնացուցակ*

*Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածը:

Տնտեսավարող սուբյեկտներում իրականացնող կազմակերպությունների օդի մանրէաբանական աղտոտվածության հետազոտություն		
Ծառայության անվանումը	**Ցուցանիշ (հետազոտություն)**	**միավոր գին մեկ փորձաքննության համար /ՀՀ դրամ/**
Արտաքին միջավայրից վերցված լվացուկներում ԱՑԽՄ-ի, Պսևդամոնաս աէրագինոզայի, ախտածին ստաֆիլակոկի որոշում	1մ^3 օդում մանրէների ընդհանուր քանակը	500
Արտաքին միջավայրից վերցված լվացուկի նմուշում աղիքային ախտածին մանրէների և պայմանական ախտածին մանրէների որոշում	1մ^3 օդում մանրէների ընդհանուր քանակը	500
Մանրէազերծման որակի հսկողություն (2 հետազոտությամբ՝մանրէներ և սնկեր)	1մ^3 օդում մանրէների ընդհանուր քանակը	500
Օդային միջավայրի մանրէաբանական հետազոտություն՝ մանրէների ընդհանուր թիվ, ոսկեգույն ստաֆիլակոկ, բորբոսասնկեր և խմորասնկեր և այլ սանիտարացուցադրական մանրէներ	1մ^3 օդում մանրէների ընդհանուր քանակը	2000
Օդում օզոնի սանիտարաքիմիական հետազոտություն	1մ^3 օդում մանրէների ընդհանուր քանակը	2000
Օդում ազատ քլորի սանիտարաքիմիական հետազոտություն	1մ^3 օդում մանրէների ընդհանուր քանակը	2000
Ախտահանիչ նյութում (չոր և հեղուկ) ջրածնի պերօքսիդի սանիտարաքիմիական հետազոտություն 1	1մ^3 օդում մանրէների ընդհանուր քանակը	1000
Ախտահանիչ նյութում (չոր և հեղուկ) ակտիվ քլորի սանիտարաքիմիական հետազոտություն	1մ^3 օդում մանրէների ընդհանուր քանակը	1000
Արտաքին միջավայրի առարկաներից վերցված լվացուկներից սանիտարամակաբուծաբանական հետազոտություն	1մ^3 օդում մանրէների ընդհանուր քանակը	500
Լաբորատոր – գործիքային հետազոտությունների արդյունքների հիման վրա եզրակացության տրամադրում		3000
1կմ	դրամ	150
Ընդամենը		**13150**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02505554

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԼԱՍՄԵԴ» ՍՊԸ
իր. հասցե՝ՀՀ, ք. Երևան,Ա.Իոսիֆյան փ.տ.31/1
գործ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան Ա. Աբելյան 6/4
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Արաբկիր մ/ճ
Հ/Հ 163058032083
ՀՎՀՀ 00173775

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.4
«17» 01 2022թ. կնքված
ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-22/3-2 ծածկագրով պայմանագրի

Տեխնիկական բնութագիր-գնացուցակ*

*Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածը:

Լուսավորության և միկրոկլիմայի ցուցանիշների որոշում		
Ծառայության անվանումը	**Ցուցանիշ (հետազոտություն)**	**միավոր գին մեկ փորձաքննության համար /ՀՀ դրամ/**
Լուսավորություն	լյուքս	1000
Օդի ջերմաստիճանի չափում	^{0}C	500
Օդի հարաբերական խոնավության չափում	%	500
1 կմ	դրամ	150
Ընդամենը		**2150**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02505554

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԼԱՍՄԵԴ» ՍՊԸ
իր. հասցե՝ՀՀ, ք. Երևան,Ա.Իոսիֆյան փ.տ.31/1
գործ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան Ա. Աբելյան 6/4
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Արաբկիր մ/ճ
Հ/Հ 163058032083
ՀՎՀՀ 00173775

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.5
«17» 01 2022թ. կնքված
ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-22/3-2 ծածկագրով պայմանագրի

Տեխնիկական բնութագիր-գնացուցակ*

*Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածը:

Ռեկրեացիոն ջրի ցուցանիշի որոշում		
Ծառայության անվանումը	**Ցուցանիշ (հետազոտություն)**	**միավոր գին մեկ փորձաքննության համար /ՀՀ դրամ/**
Ռեկրեացիայի գոտիների ջրերի նմուշներում ընդհանուր կոլիձև մանրէների առկայության որոշում	1մ^3 օդում մանրէների ընդհանուր քանակը	2000
Ջրի նմուշառում	-	2000
1 կմ	դրամ	150
Ընդամենը		**4150**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական գլխավոր տնօրեն
Հ/Հ
ՀՎՀՀ 02505554

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԼԱՍՄԵԴ» ՍՊԸ
իր. հասցե՝ՀՀ, ք. Երևան,Ա.Իոսիֆյան փ.տ.31/1
գործ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան Ա. Աբելյան 6/4
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Արաբկիր մ/6
Հ/Հ 163058032083
ՀՎՀՀ 00173775

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.6
« 17 » 01 2022թ. կնքված
ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-22/3-2 ծածկագրով պայմանագրի

Տեխնիկական բնութագիր-գնացուցակ*

*Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածը:

Հողերում մանրէների ցուցանիշի որոշում		
Ծառայության անվանումը	**Ցուցանիշ (հետազոտություն)**	**միավոր գին մեկ փորձաքննության համար /ՀՀ դրամ/**
Հողի նմուշում աղիքային ցուպիկի խմբի մանրէների ինդեքսի որոշում, էնտերակոկորի ինդեքսի որոշում և աղիքային ախտածին մանրէների հայտնաբերում:	1մ^3 օդում մանրէների ընդհանուր քանակը	2000
1 կմ	դրամ	150
Ընդամենը		2150

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02505554

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԼԱՍՄԵԴ» ՍՊԸ
իր. հասցե՝ՀՀ, ք. Երևան,Ա.Իոսիֆյան փ.տ.31/1
գործ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան Ա. Աբելյան 6/4
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Արաբկիր մ/6
Հ/Հ 163058032083
ՀՎՀՀ 00173775

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«17» 01 2022թ. կնքված
ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-22/3-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
			... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
«17» 01 2022թ. կնքված
ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-22/3-2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

«ԼԱՍՄԵԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
"ЛАСМЕД" ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ
"LASMED" LIMITED LIABILITY COMPANY
00173775
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ
REPUBLIC OF ARMENIA YEREVAN

Հավելված 3.1
«17» 01 2022թ. կնքված
ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-22/3-2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

«ԼԱՍՄԵԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ
"ЛАСМЕД" ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ ЕРЕВАН
"LASMED" LIMITED LIABILITY COMPANY YEREVAN
00173775
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
REPUBLIC OF ARMENIA